

Երևանի հ.62 ավագ դպրոց

Թեմա- Եղեռնի թեման հայ գրականության մեջ

Հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի՝

Արմինե Մանասյան

Երևան-2015

Եղեռնի թեման հայ գրականության մեջ

Պատմությունը փառավոր հաղթանակների և նաև ահավոր կորուստների մի շղթա է, և ժողովուրդը կորուստերից նույնպես պիտի դասեր քաղի ապագայում դրանից խուսափելու համար: Հենց այս տեսանկյունից էին Հայոց մեծ եղեռնի թեմային անդրադառնում հայ գրողները: Դիտարկենք այդ թեմայի արձարծումները հայ մեծերից Հովհաննես Շիրազի, Պարույր Սևակի, Համո Սահյանի, Վահագն Դավթյանի, Միլվա Կապուտիկյանի ստեղծագործություններում: Հաղթական Ավարայրի ճակատամարտի կողքին պարտություններ ու կորուստներ էլ ունեինք, որոնց պատճառած ցավն ու կսկիծը մշտապես բորբոքում են մեր հիշողությունը: Պատմության ընթացքի և փիլիսոփայության այսպիսի ընկալումը Հովհ. Շիրազին դրդում է խոր ընդհանացումների՝ ժողովուրդն ինքն իր մեջ պետք է որոնի «իր փրկության աստղը»: Անցել են պատրանքներով ապրելու, այս կամ այն օտար ուժերին ապավինելու ժամանակները:

Բանաստեղծը սթափության կոչ է անում, սեփական ուժերին ապավինելու կոչ, որովհետև՝

Քրիստոնյա աշխարհը հեթանոսվեց, մահմեդվեց՝

Հազար անգամ է դավել՝

Ոչ մի մեղք չի քավել:

Դարեր շարունակ կրկնվել է ուրիշների հետ հույսեր կապելու պատմությունը՝ առանց գիտակցելու, որ «մեզ ոչ մի ազգ չի ցավի», թե Խղճի և Արդարության թելադրանքով, այլ որոշակի հետաքրքրություններով ու շահերով: Այս զգացողությամբ ապրող բանաստեղծը հարցնում է՝

Ե՞րբ պիտի դառնամ իմ գլխի տերը,

Իմ երկրի տերը ե՞րբ պիտի դառնամ...

Ինչպե՞ս պիտի դառնամ:

Եվ տալիս է այդ հարցերի պատասխանը՝

Դու իմ ազգին՝ գորքվիր ասա,

Ասա գորքվիր քո հավատին:

Կամ «Միակ ճամփեն փրկության՝ Հայեր, դեպի Հայաստան»: Բանաստեղծի համար կարևորվում է մեր կորցրած հավատի վերագտնումը, մշտապես «գարկված ու զրկված» հայրենիքի քաղաքացին կոչվելու հոգեբանության հաղթահարումը:

Միայն այս դեպքում «Չի խոնարհվի Մասիսն հավերժ», թեկուզ բռնակալները «դեռ գան ու չանցնեն»: Ժողովուրդը պետք է հարատևի՝ լայն բացելով «մեր կույր բախտի աչքը ապշած»:

Բանաստեղծը ապրում է այն հույսով, որ

Հատուցումը եղեռնի,

Երբ էլ լինի՝ կհառնի:

Կհառնի՝ ապրելու մեր անհազ հաստատակամությամբ, մեր հոգևոր մաքառումների պոռթկումներով:

Խոսելով հատուցման մասին՝ բանաստեղծը գրում է.

Մեզ նախանձից եղեռնեցին...

Հույսն օրոցք դրած...

Նա գտնում է, որ պետք է փնտրել արդարություն, որին կհասնենք միայն այն ժամանակ, երբ ճշմարիտ գնահատական կտրվի մեծ եղեռնագործությանը: Բայց արդարությունը մեծ տերությունների քմահաճույքից է կախված: «Չի մոռացվելու հայոց եղեռնը վշտով անսահման», քանի դեռ միլիոնավոր զոհերի միակ հուշարձանը Ծիծեռնակաբերդի հուշահամալիրն է, քանի դեռ կան օտարության մեջ ապրող, ինչպես նաև դեռ օտարության ձգտող հայ մարդիկ:

Բանաստեղծն արթնացնում է ժողովրդի պատմական հիշողությունը, ներարկում հավատի և հույսի կենսատու շողեր: Նա, ինչքան էլ խորն ու անամոք է եղեռնի ցավը ու վերքը՝ չսպիացող, անեծքով չի պղծում իր շուրթերը: Ապրում է հայ բանաստեղծին հատուկ կենսասիրությամբ ու լավատեսությամբ՝

Բալասանվեմ իմ բաց վերքին...Օրոցք դնեմ իդձերն հայոց՝

Հայոց հույսերն օրորելով...

Ծաղկեցնեմ շիրիմն անգամ արքայաշուք իմ պապերի...

Մայրաքաղաք Երևանին Անին դարձնեմ մայրաքաղաք:

Հովհ. Շիրազը հավատում է բանականության հաղթանակին, հավատով սպասում է այն ժամանակներին, երբ կբացվեն «հայ դարպասները», և մեր սրբությունները «չեն մնա վայոց»:

Համո Սահյանի պոեզիայում ևս պատմությունը շարունակվում է արդիականության մեջ և հնարավորություն է տալիս զգալ ժամանակների շարժումը:

Իր եղեռնապատումը Հ. Սահյանն սկսում է մեր պատմության գլխավոր մայրուղու բնութագրությամբ ու գնում է դեպի սկիզբը, որն այսպես է եղել.

Գալիս է հոտը...

Ներին առջևից

Գամփռը ետևից,

Ուղտը մի թևից,

Թուխպը մի թևից,

Ամեն, ամեն ինչ

Խառնելով իրար՝

Ալեկոծվում է բլուրներն ի վար

Սև հեղեղի պես:

Դարեր շարունակ քոչվոր ցեղերը առևանգել են հույսի մեր բողբոջներն ու լույսի նշխարները, «փալանած եզան բուֆ կճղակներով» սրորել «հունդ ու հորովել»: Պատմությունը շարունակվում է, և դեռ... «Գալիս է հոտը»: Գալիս է ավելի դժնի ու դաժան հորձանքով, քաղաքակրթության ու «եղբայրության» դիմակով սքողված, սև հեղեղի ու սպիտակ պտտահողմի պես: Հայրենիքի կերպարը կերտվում է պատմության թոհ ու բոհի մեջ, ժամանակի ու տարածություն աներևակայելի տուրևառության ընթացքը բախվում է հզոր լեռներին, ուր ամենուրեք՝

Քարե մրրիկ է ու քարե բուք է,

Քարե թռիչք է, քարե անկում:

Բանաստեղծը հավատում է ժողովրդի կենսունակությանն ու վստահ է, որ այսուհետև՝

Ինչ էլ պատահի, ձյուներդ հայերեն են լալու,

Գարունդ հայերեն է գալու,

Հայերեն են գալու դարդերդ:

Համաշխարհային ողբերգության մասշտաբները Պ. Սևակը բացահայտում է պատմական զարգացման ընթացքով, Մեծ Անհատի ողբերգությամբ, չարիքի բնույթի մեջ ներթափանցելով: Շարունակվում է Առաջին համաշխարհայինը, եվրոպական երկրները զբաղված են «նոր կենսական տարածքների» յուրացման գործով: Թուրքիայի համար բարենպաստ պայմաններ ստեղծվել՝

Դարերով շնչող Հայաստան բառի բոլոր տառերը,

Նրա ապագան, մշտահոտ ներկան

Եվ մինչև անգամ անցած դարերը բռնությամբ քերելու համար:

Առաջին հարվածն իր վրա ընդունեց մտավորականությունը: Ազգը գլխատվեց.

Ահեղ գիշեր,

Որ բոբբ ներկվեց ոչ արևով,

Այլ մեր արյամբ,

Ու կողոպտեց խորանները հայ կաճառի,

Խորանները հայ դպրության սուրբ տաճարի:

Բոլոր ճյուղը կտրատեց

Հայ հանճարի ծաղկուն ծառի

Ու մատյանից հայ մեղեդու

Ամենավառ երգը հատեց:

Պ. Սևակի «Անլռելի զանգակատուն» պոեմը եղեռնի ահասարսուռ դեպքերի ընդհանուր համապատկերի վրա կյանքի, աշխատանքի, սիրո ու գեղեցկության փառաբանությունն է, լույսի հաղթանակը խավարի ու բռնության դեմ: Այդ պոեմի ղողանջներով բանաստեղծն արթնացրեց ժողովրդին, հնչեցրեց նրա «խղճի ձայնը»:

Պոեմը նշանակալից է պատմության մայրուղու խորացված զգացողությամբ ու ժամանակակից հնչեղությամբ: Այս գիծն ավելի է թանձրանում «Եռաձայն պատարագում», ուր Պ. Սևակը մատնանշում է այն ուղին, որը միակ հնարավորն է ժողովրդի՝ իր գոյության իրավունքի և ազգային դիմանկարի համար մղվող պայքարում.

Դու, որ վաղուց ես կոչվում ժողովուրդ,

Թեպետ ականա դեռ ժողովված չես,

Տակավին ցիր ես, ցան ես և Սփյուռք,

Դու այսուհետև ժողովվես պիտի

Նախ՝ ինքդ քո մեջ

Եվ ապա՝ քո շուրջ:

Թե՛ «Անլռելի զանգակատուն» պոեմում և թե՛ «Եռաձայն պատարագում» հայ ժողովրդի անցած ճանապարհը իմաստավորվում է համաշխարհային պատմության ենթատեքստում: Հայ ժողովրդի մեծագույն ողբերգության արմատները բանաստեղծը փնտրում է մեծ տերությունների ոչ միայն դիվանագիտական խաղերում, այլև համագործակցության մեջ: Չարիքը չարիք է ծնում, եթե ժամանակին մարդկությունը ճշմարիտ գնահատական տար 1915 թ. դեպքերին, հետագայում չէր կանգնի նմանատիպ փաստերի առջև: Մարդկությունն ինքն է իր քար անտարբերությամբ իրեն դնում անելանելի իրավիճակների մեջ: «Հանցապարտին չմահապարտելու» հետևանքով «Մեր, նախ մեր, լոկ մեր ապրածը հետո վերցրեց ինքը՝ աշխարհը համայն»: Բուխենվարդների, Օսվենցիմների, Մայդանեկների և Դահաունների սկիզբը դրվեց Դեր-Չորում, «Զիարեթներում, Էնկյուրիներում, Ռաքքայում, Բաբում...»:

Ամբողջ աշխարհն ավելի ահասարսուռ իրադարձություններ ապրեց.

Երբ Վիլհելմ Հաջին Հիտլերին ծնեց,

Երբ Թալեաթ ծնեց Հեբելսին,

Երբ գեթեն իրեն էսէս անվանեց,

Եվ ենիչներին կոչվեց գեստապո,

Շեհիդն ու միլլին՝ պատերազմ տոտալ,

Նոր կարգ՝ հիքմեթի հոքյումեթը հին,

Հազգ դին ասվածը՝ նորակոչ նացիզմ:

Հանցապարտի փոխարեն... «կրտսերը դատվեց ու դեռ կդատվի»:

Եղեռնից մի քանի տասնամյակ հետո իրադարձությունները կրկնվեցին՝ ընդգրկելով ավելի լայն տարածաշրջաններ: Ամենուրեք նույն ձեռագիրն է, որովհետև նույն են հանցագործ ձեռքերը՝

Դուք ստուգեցեք նրանց ձեռքերը

Եվ հիմա նույնիսկ, կես հազարամյակ անցնելուց հետո,

Նրանց խնամված եղունգների տակ դարձյալ կտեսնեք
լերդացածարյուն,

Արդարանալու մի հնար ճարեք

Եվ գորգ գողացեք մեջերից թեկուզ:

Պոեմում առանձնակի դեր է վերապահված Հիշողությանը.

Ամենագորեղ բանը աշխարհում հիշողությունն է,

Որ եթե նույնիսկ ծակոտկեն է,

Ապա ոչ երբեք տուպրակի նման,

Այլ այն վանդակի, այն ամուր ցանցի,

Որի մեջ ցմահ դատապարտվածն է ստիպված ապրում:

Հագարամյա մեր հուշերն ապրում են մեր մեջ, բորբոքում մեր արյան եռքը, «մեր մկանների խառը ժխորը ու մեր ջղերի լարմանը ճայթումը» շարունակվում են «մեզանից ծնված մանուկների մեջ», դառնում են կենսագրություն: Մեր հայրենիքը մենք չենք կորցրել, այն... ընդամենը հափշտակվել է: Մեր մեջ «մնում է դարձյալ հրաշքի անմեռ ակնկալիքը», մեր միլիոնավոր նահատակները՝ «զրկված և՛ շիրիմից, և՛ շիրմաքարից, միշտ էլ ելել են ու ելնում են դուրս՝ քառապատկելով շարքերն ապրողաց»:

1915թ. եղեռնից հետո ժողովուրդը, թվում է, հասել է իր երազանքների հանգրվանին՝ շեն ու նորոգ հայրենիք է ստեղծել, իր «ապահովությունը երաշխավորել է եղբայրական դաշինքով»: Բայց իրողությունը բոլորովին այլ է, և բանաստեղծը հնչեցնում է տագնապի նոր ահագանգ՝

Այս ջարդ-սպանդը երեկ չսկսվեց

Եվ ոչ էլ վաղն է նա ավարտվելու,

Ուստի վախեցեք սպանդից ճերմակ

Ավելի, քան թե եղեռնից կարմիր:

Պ.Սևակն արթնացնում է ժողովրդի կարծես թե արդեն նիրհող հիշողությունը և «գողթան երգերի երգերի չափով այլազան, բամբ

բամբիռների հնչումով պես-պես, ամենատարբեր ելևէջումով շարականների» հնչեցնում է Մասիսների «եռաձայնող զանգի ասմունքը՝ Ողբամ մեռելոց, Բեկանեմ շանթեր, Կոչեմ Ապրողաց»:

Եղեռնը չընդհատեց մեր ժողովրդի ճանապարհը, չկարողացավ կոտրել նրա ապրելու կամքը: Թեպետ եղեռնից շատ տարիներ հետո էլ ժողովրդի մի մասն ապրում էր «ինքն իր որդուց մերժված, ինքն իր որդուն՝ օտար, ինքն իր տան մեջ դարձած վտարանդի», բայց միևնույնն է, նա հոգուտ «լինելու» է լուծել «լինել-չլինելու» խնդիրը,- այս դիտանկյունից է անցյալ դարասկզբի եղեռնական դեպքերին անդրադառնում Ս. Կապուտիկյանը: Անպայման լինել, որովհետև կան թեպետ «լաց ու արհավիրք տեսած», բայց աշխարհին գեղեցիկ հայացքով նայող հայ աչքեր, «Ժայռի նման կոշտ ու չհղկված, ժայռի պես կարծր ու համառ, ժայռի պես հողում խրված» Ղարաբաղի բարբառ և «հողի պես սևուկ» ու «կոշտ հայերենով» խոսող մանուկներ, որոնք՝

Սարից սար հասնող կանչ ու աղմուկով,

Առողջ կարմիրով լիք-լիք այտերի,

Զվարթ զնգոցով մանուկ ծիծաղի,

Բոբիկ ոտքերի հաստատ քայլվածքով,

Աշխարհին հառած շիտակ նայվածքով

Ասում են՝ «Լինել»:

Բայց ինչպե՞ս լինել: Փոքր ժողովուրդներն իրավունք չունեն սխալվելու: Նրանք պետք է ճշգրիտ ընտրություն կատարեն ճանապարհների միջև: Հայ ժողովրդի համար այդ միակ ճանապարհը իր մտավոր ու հոգևոր կարողությունների բազմապատկումն է, քաղաքակիրթ աշխարհի առաջընթացից հետ չմնալը: Հայ ժողովուրդը պետք է ապրի ոչ միայն «Շենիկի հանդում մորթված որբի տեղ՝ Աշնակցի հարսի տասնչորս թոռով», այլև «Պատմության երթում՝ անդուլ, հանապազ, առաջինների շարքում քայլելով»:

Պիտի ապրի վրեժ, ասել է թե՛

Ապրելով համառ, հազարապատիկ,

Հանապազօրյա խոսք ու աղոթքով:

Պիտի վրեժ լուծի հանճարեղ ծնող արգանդի բեղմնավորությամբ, նոր չարենցներ ծնելով, «սեզ Սարյանով ու Խաչատրյանով»:

Աշխարհը դեռ շատ է խառնակ, ազգերը դեռ շատ են վայրենի, իսկ մեր իմաստուն ժողովուրդը պիտի ապրի՝ «պատմության հանդեպ երեսը միշտ պարզ», «որոնող ոգու բուռն հորձանքով, ոխի, մոլուցքի, մշուշի դիմաց՝ ազնիվ դաշինքի իր հին կարոտով, Դավթի վիպերգով»:

Միայն այս դեպքում յուրաքանչյուր հայ կարող է հնչեցնել՝

Օ՛, լյառն Արարատ,

Կերպավորիք ինձ ըստ քո պատկերի,

Հաշտեցնելու ընդոստ երկվորություններս

Եվ ինձ էլ օժտիր անտրոհելի քո այդ հաշտությամբ՝

Շունչ դառնալ, ոգի, գոյության խորհուրդ՝ հնամյա ցեղիս: